ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 29 հունվարի 2000 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այսօր ընդունեց Եվրախորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի պատվիրակությանը:

«Ընթանալով Հայ Եկեղեցու դերը Հայաստանի և հայ ժողովրդի կյանքում մենք ցանկացանք լինել նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում»,- Վեհափառ Հայրապետին ներկայացնելով պատվիրակության այցի նպատակը՝ ասաց կոնգրեսի ներկայացուցիչ Կլոդ Կասագրանդը:

Պրն. Կասագրանդը, նշելով Եվրախորհրդին Հայաստանի անդամակցությանն օժանդակելու իրենց պատրաստակամությունը, դրվատանքով խոսեց ժողովրդավարացման ճանապարհին Հայաստանում արձանագրված առաջընթացի մասին, հետաքրքրվեց այս ասպարեզում Հայ Եկեղեցու դերակատարությամբ:

Վեհափառ Հայրապետը ողջունեց Եվրախորհրդի ներկայացուցիչների այցը հայոց հոգևոր կենտրոն, բարձր գնահատեց նրանց աշխատանքը Հայաստանում:

«Հավատում ենք, որ եթե Եկեղեցին մտնի ժողովրդի առօրյա կյանքի մեջ, դառնա քրիստոնեական բարոյականի կրողը, ապա ոչ միայն Հայաստանում, այլև ողջ մարդկության կյանքում ցավն ու կսկիծը նվազ կլինեն»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ կարևորելով Հայ Եկեղեցու առաքելությունը երկրի ժողովրդավարացման ասպարեզում: Այս առնչությամբ Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ Եկեղեցի-պետություն համագործակցությանը՝ նշելով սակայն, որ այդ համագործակցությունն առավել գործնական ու օգտակար կարող է դառնալ անհրաժեշտ իրավական դաշտի ամրագրմամբ:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը անդրադարձավ նաև Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարություններին:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ